Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-008-18.08.2021,01.12.2021-ՏՏԳՇ-011

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.2. հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 19.1. և 19.2. մասերով՝

«19.1. Ազդակիր բնակավայրը համայնքի այն բնակավայր(եր)ն է, որը հարակից է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ռոյալթի վճարող կազմակերպությանը լեռնահատկացման ակտով հատկացված տարածքին:

19.2. Համայնքային մասհանումները համայնքների ֆոնդային բյուջեներ մուտքագրվող գումարներ են, որոնք հանդիսանում են նպատակային միջոցներ եւ օգտագործվում են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման համար՝ առաջնահերթություն տալով ազդակիր բնակավայր(եր)ին:»:

***Հոդված 2.*** Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել 5-10-րդ մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5. Պետական բյուջեի ծախսերում նախատեսվում է նաեւ համայնքների բյուջեներին հատկացնել անվերադարձ կարգով տրվող մասհանումներ՝ յուրաքանչյուր ռոյալթի վճարողի կողմից օրենքով սահմանված չափով եւ կարգով յուրաքանչյուր հաշվետու տարում պետական բյուջե վճարված ռոյալթիի չափի երկու տոկոսից (այսուհետ՝ համայնքային մասհանում): Սույն հոդվածի իմաստով ռոյալթի վճարող է համարվում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ռոյալթի վճարողը:

6. Յուրաքանչյուր ռոյալթի վճարողի համայնքային մասհանումը բաշխվում է համայնքների բյուջեների երկաստիճան համակարգով՝ համայնքային մասհանման 50 տոկոսը բաշխվում է համայնքի ազդակիր բնակավայր(եր)ի միջեւ հավասարաչափ, իսկ մյուս 50 տոկոսը հավասարաչափ բաշխվում է Հայաստանի Հանրապետության այն բոլոր համայնքների միջեւ, որոնց կազմում կան սույն օրենքի 1.2-րդ հոդվածի 19.1-րդ մասով սահմանված ազդակիր բնակավայր(եր)՝ այլ ռոյալթի վճարողներից, բացառելով սույն մասի սկզբնամասում նշված ազդակիր բնակավայր(եր) ներառող համայնքները:

Մասհանումների չափերը որոշելիս հիմք է ընդունվում առաջիկա բյուջետային տարվան նախորդող երրորդ տարվա փաստացի վճարված ռոյալթիի գումարների առկա տվյալները:

7. Համայնքային մասհանումների ծախսման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նախագիծը եւ Ծրագրի փոփոխությունները մշակվում են համայնքի ղեկավարի կողմից՝ հիմք ընդունելով տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերը՝ առաջնահերթություն տալով ազդակիր բնակավայրի զարգացման ծրագրերին: Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի համաձայնեցմանն են ներկայացվում համայնքի ղեկավարի կողմից:

8. Ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9. Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

10. Ազդակիր բնակավայրերի ցանկը սահմանում է Լիազոր մարմինը:»:

***Հոդված 3***. Օրենքի 28[1]-րդ հոդվածի 1.1.-ին մասի «բ» կետում «չափերով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքով սահմանված կարգով համայնքային մասհանումների» բառերը:

***Հոդված 4.*** Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել 3.1.-ին մասով հետեւյալ բովանդակությամբ.

«3.1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում է սույն օրենքի 20-րդ հոդվածով համայնքներին բաշխված համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությանը ներկայացվող պահանջները և հաշվետվության ձեւաչափը:»:

***Հոդված 5.*** Օրենքի 36-րդ հոդվածի «գ» կետում «կայքում,» բառից հետո լրացնել «իսկ սույն օրենքի 20-րդ հոդվածով համայնքներին բաշխված համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությունը առանձին հրապարակվում է տվյալ համայնքի պաշտոնական կայքում՝ համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում: Վերջինիս բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հրապարակվում է համապատասխան մարզպետարանի պաշտոնական կայքում:» բառերով:

***Հոդված 6.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ընդունվելուց հետո Կառավարությունը հաստատում է՝

1) համայնքային մասհանումների ծախսման ծրագրերում նախատեսված միջոցառումների ուղղությունները եւ դրանց առաջնահերթությունները՝ վեցամսյա ժամկետում,

2) Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը՝ վեցամսյա ժամկետում,

3) Համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությանը ներկայացվող պահանջները և հաշվետվության ձեւաչափը՝ չորսամսյա ժամկետում:

3. Սույն օրենքն ընդունվելուց հետո լիազոր մարմինը հաստատում է ազդակիր բնակավայրերի ցանկը՝ վեցամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.2. հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 19.1. և 19.2. մասերով. «19.1. Ազդակիր բնակավայրը համայնքի այն բնակավայր(եր)ն է (են), որը հարակից է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ռոյալթի վճարող կազմակերպությանը լեռնահատկացման ակտով հատկացված տարածքին:~~որի (որոնց) վարչական տարածքում գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ռոյալթի վճարող կազմակերպությունը, որը գործունեություն է ծավալում լեռնահատկացմամբ սահմանված տարածքում:~~

19.2. Համայնքային մասհանումները համայնքների ֆոնդային բյուջեներ մուտքագրվող գումարներ են, որոնք հանդիսանում են նպատակային միջոցներ եւ օգտագործվում են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման համար՝ առաջնահերթություն տալով ազդակիր բնակավայր(եր)ին:»:

***Հոդված 2.*** Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել 5-~~9~~10-րդ մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5. Պետական բյուջեի ծախսերում նախատեսվում է նաեւ համայնքների բյուջեներին հատկացնել անվերադարձ կարգով տրվող մասհանումներ՝ յուրաքանչյուր ռոյալթի վճարողի կողմից օրենքով սահմանված չափով եւ կարգով յուրաքանչյուր հաշվետու տարում պետական բյուջե վճարված ռոյալթիի չափի երկու տոկոսից (այսուհետ՝ համայնքային մասհանում): Սույն հոդվածի իմաստով ռոյալթի վճարող է համարվում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ռոյալթի վճարողը:

6. Յուրաքանչյուր ռոյալթի վճարողի համայնքային մասհանումը բաշխվում է համայնքների բյուջեների երկաստիճան համակարգով՝ համայնքային մասհանման 50 տոկոսը բաշխվում է համայնքի ազդակիր բնակավայր(եր)ի միջեւ հավասարաչափ, իսկ մյուս 50 տոկոսը հավասարաչափ բաշխվում է Հայաստանի Հանրապետության այն բոլոր համայնքների միջեւ, որոնց կազմում կան սույն օրենքի 1.2-րդ հոդվածի 19.1-րդ մասով սահմանված ազդակիր բնակավայր(եր)՝ այլ ռոյալթի վճարողներից, բացառելով սույն մասի սկզբնամասում նշված ազդակիր բնակավայր(եր) ներառող ~~պարբերության առաջին մասում~~ համայնքները:

Մասհանումների չափերը որոշելիս հիմք է ընդունվում առաջիկա բյուջետային տարվան նախորդող երրորդ տարվա փաստացի վճարված ռոյալթիի գումարների առկա տվյալները:

~~7. Համայնքային մասհանումները համայնքների ֆոնդային բյուջեներ մուտքագրվող գումարներ են, որոնք հանդիսանում են նպատակային միջոցներ եւ օգտագործվում են սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման համար:~~

~~8~~7. ~~Համայնքներին բաշխված հ~~Համայնքային մասհանումների ~~մասով սոցիալ-տնտեսական զարգացման~~ ծախսման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նախագիծը եւ Ծրագրի փոփոխությունները մշակվում են համայնքի ղեկավարի կողմից՝ հիմք ընդունելով տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերը՝ առաջնահերթություն տալով ազդակիր բնակավայրի զարգացման ծրագրերին: Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի համաձայնեցմանն են ներկայացվում համայնքի ղեկավարի կողմից:

~~9~~8. Ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

~~, ինչպես նաեւ Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:~~

9. Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

10. Ազդակիր բնակավայրերի ցանկը սահմանում է Լիազոր մարմինը:»:

***Հոդված 3***. Օրենքի 28[1]-րդ հոդվածի 1.1.-ին մասի «բ» կետում «չափերով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքով սահմանված կարգով ~~համայնքներին բաշխվող~~ համայնքային մասհանումների» բառերը:

***Հոդված 4.*** Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել 3.1.-ին մասով հետեւյալ բովանդակությամբ.

«3.1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում է սույն օրենքի 20-րդ հոդվածով համայնքներին բաշխված համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությանը ներկայացվող պահանջները և ~~առանձին~~ հաշվետվության ձեւաչափը~~հաշվետվության առանձին ձեւաչափ~~:»:

***Հոդված 5.*** Օրենքի 36-րդ հոդվածի «գ» կետում «կայքում,» բառից հետո լրացնել «իսկ սույն օրենքի 20-րդ հոդվածով համայնքներին բաշխված համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությունը առանձին հրապարակվում է տվյալ համայնքի պաշտոնական կայքում՝ համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում~~:~~ Վերջինիս բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հրապարակվում է համապատասխան մարզպետարանի պաշտոնական կայքում:» բառերով:

***Հոդված 6.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ընդունվելուց հետո Կառավարությունը հաստատում է՝

1) համայնքային մասհանումների ծախսման ծրագրերում նախատեսված միջոցառումների ուղղությունները եւ դրանց առաջնահերթությունները՝ վեցամսյա ժամկետում,

2) Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը՝ վեցամսյա ժամկետում,~~ ինչպես նաեւ Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը՝ վեցամսյա ժամկետում,~~

~~2~~3) ~~համայնքներին բաշխված~~ համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությանը ներկայացվող պահանջները և հաշվետվության ձեւաչափը ~~հաշվետվության ձեւաչափը~~՝ չորսամսյա ժամկետում:

3. Սույն օրենքն ընդունվելուց հետո լիազոր մարմինը հաստատում է ազդակիր բնակավայրերի ցանկը՝ վեցամսյա ժամկետում:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-008-18.08.2021,01.12.2021-ՏՏԳՇ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| **1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** | | | | | |
| 1. | **Կառավարություն** | 1-ին հոդված | Խմբագրել Նախագծի 1-ին հոդվածով սահմանվող «ազդակիր բնակավայր» հասկացությունը, հաշվի առնելով Հողային օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ բնակավայրերի սահմանագծերում ընդգրկված հողերում ընդերքի ու բնական պաշարների օգտագործումը սահմանափակվում կամ արգելվում է: | Ընդունվել է:<br><br>1-ին հոդվածով լրացվող 19.1-ին մասը խմբագրվել է: | Ընդունվել է |
| 2. | | 1-ին հոդված | 2-րդ հոդվածով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածում լրացվող նոր 7-րդ մասում ամրագրված կարգավորումն առաջարկում ենք նախատեսել Օրենքում կիրառված հասկացություն- ների շարքում: | Ընդունվել է:<br><br>Նախագծի 1-ին հոդվածում կատարվել է համապատասխան լրացում, հոդվածը լրացվել է «19.2» մասով:<br><br>Իսկ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածում լրացվող նոր 7-րդ մասում ամրագրված կարգավորումը հանվել է:<br><br>Ըստ այդմ փոփոխվել է 2-րդ հոդվածի մասերի համարակալումը: | Ընդունվել է |
| 3. | | 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածում լրացվող նոր 6-րդ մասում անհրաժեշտ է վերանայել, խմբագրել և հստակեցնել «սույն պարբերության առաջին մասում նշված համայնքները» բառերի կիրառումը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նման ձևակերպման | Ընդունվել է:<br><br>Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 6-րդ մասը խմբագրվել է՝ «բացառելով սույն պարբերության առաջին մասում նշված համայնքները» բառերը փոխարինվել են «բացառելով սույն մասի սկզբնամասում նշված | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պարագայում պարզ չէ թե 6-րդ մասում առկա ինչ պարբերության առաջին մասում նշված համայնքների մասին է խոսքը:<br>Ինչպես նաև առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, համաձայն որոնց՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի: | ազդակիր բնակավայր(եր) ներառող համայնքները» բառերով: | |
| 4. | | | 2-րդ հոդվածով լրացվող նոր 9-րդ մասով ամրագրված կարգավորում- ներն առաջարկում ենք շարադրել այնպես, որ դրանց բովանդակությունից հստակ պարզ դառնա, որ Ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները սահմանելու է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: | Ընդունվել է:<br><br>Նախագծի 2-րդ հոդվածում Կառավարության կողմից հաստատվող որոշումները տարանջատվել են և նախատեսվել առանձին՝ 8-րդ և 9-րդ մասերով: | Ընդունվել է |
| 5. | | | 2-րդ հոդվածում լրացնել ազդակիր բնակավայրերի ցանկը լիազոր մարմնի կողմից սահմանելու դրույթ: | Ընդունվել է:<br><br>Նախագծի 2-րդ հոդվածում լրացվել է նոր 10-րդ մաս: | Ընդունվել է |
| 6. | | 3-րդ հոդված | 3-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 281-րդ հոդվածին կատարված հղումն անհրաժեշտ է վերանայել: | Ընդունվել է:<br><br>Նախագծի 3-րդ հոդվածում «281» թիվը փոխարինվել է «$28^1$» թվով: | Ընդունվել է |
| 7. | | 4-րդ հոդված | Առաջարկում ենք Նախագծում սահմանել կարգավորումներ նաև հաշվետվությանը ներկայացվող պահանջների վերաբերյալ: | Ընդունվել է:<br><br>Նախագծի 4-րդ հոդվածը համապատասխանաբար խմբագրվել է: | Ընդունվել է |
| 8. | | 5-րդ հոդված | 5-րդ հոդվածով նախատեսել համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությունը առանձին հրապարակելու ժամկետի վերաբերյալ կարգավորումներ: | Ընդունվել է:<br><br>5-րդ հոդվածում կատարվել է լրացում, ըստ որի՝ համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությունը առանձին | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | հրապարակվում է տվյալ համայնքի պաշտոնական կայքում՝ համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում: | |
| 9. | | 6-րդ հոդված | 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Նախագիծն ուժի մեջ է մտնելու 2023 թվականի հունվարի 1-ից: Ուստի, նկատի ունենալով վերոգրյալը՝ առաջարկում ենք նկատի ունենալ, որ Նախագծի 6-րդ հոդվածում նշված ակտերի ուժի մեջ մտնելու ժամկետը չի կարող ավելի վաղ լինել, քան Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը: | Ընդունվել է:<br><br>Նախագծի 6-րդ հոդվածում նշված ենթաօրենսդրական ակտերի ուժի մեջ մտնելու ժամկետները կսահմանվեն 2023 թվականի հունվարի 1-ից հետո:<br><br>6-րդ հոդվածում ավելացվել է 3-րդ մաս՝ ազդակիր բնակավայրերի ցանկը հաստատելու վերաբերյալ: | Ընդունվել է |
| **2. «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** | | | | | |
| 1. | ***ՀՀ կառավարություն*** | Նախագծի վերնագիր | Նախագծի վերնագրում «լրացում» բառը փոխարինել «լրացումներ» բառով: | Ընդունվել է:<br><br>Նախագծի վերնագրում կատարվել է համապատասխան ուղղում: | |
| 2. | | 1-ին հոդված | Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածում ամրագրված կարգավորման պահանջները՝ հիշյալ իրավական ակտերում կիրառված ձևակերպումների միատեսակ կիրա- ռությունը ապահովելու նպատակով առաջարկում ենք օրենքների նախագծերում ամրագրված կարգա- վորումները (ծրագրի անվանումը) համապատասխանեցնել միմյանց: | Ընդունվել է:<br><br>Նախագծերում ծրագրի անվանումը համապատասխանեցվել է: | Ընդունվել է |
| 3. | | 2-րդ և 3-րդ հոդվածներ | 2-րդ և 3-րդ հոդվածներում նշվում է միայն ծրագրի հաստատման մասին, մինչդեռ, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում նշվում է նաև՝ օրինակ ՝ Ծրագրի փոփոխությունների մասին:<br>Ելնելով վերոգրյալից՝ նախագծերով առաջարկվող կարգավորումներն անհրաժեշտ է համապատասխանեց- նել | Ընդունվել է:<br><br>Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներում կատարվել են լրացումներ: | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | միմյանց: | | |
| 4. | | 3-րդ հոդված | Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումն առաջարկում ենք վերանայել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում արդեն իսկ առկա է 3.1-ին կետ: | Ընդունվել է:<br><br>Լրամշակված նախագծի 3-րդ հոդվածում «3.1)» թիվը փոխարինվել է «3.2)» թվով: | Ընդունվել է |
| 5. | | 4-րդ հոդված | Նախագծի 4-րդ հոդվածում առաջարկում ենք կատարել լրացում՝ նախատեսելով համայնքային մասհանումների ծախսման ծրագրերում առաջարկվող փոփոխությունները համայնքի ավագանու կողմից հաստատելու մասին պահանջ ևս: | Ընդունվել է:<br><br>Կատարվել է համապատասխան լրացում: | Ընդունվել է |

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| **1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** | | | | | |
| 1. | ***ՀՀ ԱԺ պատգամավոր Արմենուհի Կյուրեղյան*** | Նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածի 7-րդ կետը՝ փոխարինել նոր խմբագրությամբ.<br><br>*«Համայնքային մասհանումները համայնքների ֆոնդային բյուջեներ մուտքագրվող գումարներ են, որոնք հանդիսանում են նպատակային միջոցներ եւ օգտագործվում են բացառապես հանքարդյունաբերության հետևանքով ազդակիր համայնքների կրած սոցիալ-տնտեսական բացասական հետևանքները մեղմելու նպատակով:»:* | Չի ընդունվել:<br><br>Օրենսդրական փոփոխություններն իրականացվում են ոչ թե **բացառապես** հանքարդյունաբերության հետևանքով ազդակիր համայնքների **կրած** սոցիալ-տնտեսական բացասական հետևանքները մեղմելու նպատակով, այլ դրանցով նախատեսվում է նպաստել համայնքների կայուն և շարունակական զարգացմանն ընդհանրապես, հատկապես՝ համայնքների ազդակիր բնակավայրերում: Ռոյալթիների բաշխման նշված կարգը կնպաստի համայնքների ազդակիր բնակավայրերի ծրագրերի իրականացման առումով կարողությունների զարգացմանը: | Չի ընդունվել |
| 2. | ***ԱԺ պատգամավոր Արթուր*** | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>«Հայաստանի Հանրապետության | Չի ընդունվել: | Չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ***Խաչատրյան*** | | բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.2. հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 19.1. մասով. «19.1. Սույն օրենքի իմաստով ազդակիր բնակավայրը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով այդպիսին ճանաչված այն համայնքը կամ դրա բնակավայրն է, որի շրջակա միջավայրի վրա ազդեցություն է ունենում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ռոյալթի վճարող այն կազմակերպությունը, որը գործունեություն է ծավալում լեռնահատկացմամբ սահմանված տարածքում:»: | Առաջարկվող հասկացությունը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» օրենքի էությունից բխող սահմանում է և չի բխում օրենքի նախագծում կատարվող փոփոխությունների բովանդակային համատեքստից:<br><br>Համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի՝ ՀՀ-ում բոլոր մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից արդեն իսկ կատարվում են մասհանումներ, որոնք հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում **բացառապես բնապահպանական ծրագրերի** իրականացման համար:<br><br>Ռոյալթին մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով վճարվող **բնօգտագործման** վճարի տեսակ է և ռոյալթիներից կատարվող մասհանումները նախատեսվում է բաշխել համայնքային բյուջեներին սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման համար՝ առաջնահերթություն տալով ազդակիր բնակավայր(եր)ին: | |
| 3. | | Նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ<br><br>6.«Յուրաքանչյուր ռոյալթի վճարողի համայնքային մասհանումը բաշխվում է համայնքների բյուջեների երկաստիճան համակարգով այնպես, որ համայնքային մասհանման 50 տոկոսը բաշխվի ազդակիր բնակավայր(եր)ի միջեւ հավասարաչափ, իսկ մյուս 50 տոկոսը հավասարաչափ բաշխվի Հայաստանի Հանրապետության այն բոլոր համայնքների միջեւ, որոնց կազմում չկան սույն օրենքի 1.2-րդ հոդվածի 19.1-րդ մասով սահմանված ազդակիր բնակավայր(եր)՝ այլ ռոյալթի | Չի ընդունվել:<br><br>Ռոյալթիներից կատարվող մասհանումներից ազդակիր բնակավայր չներառող համայնքներին մասնաբաժնի հատկացումը դուրս է օրենքում կատարվող փոփոխությունների բովանդակային համատեքստից: | Չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | վճարողներից, | | |
| 4. | | Նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>«Համայնքային մասհանումները համայնքների ֆոնդային բյուջեներ մուտքագրվող այն գումարներ են, որոնք հանդիսանում են նպատակային միջոցներ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված համայնքի 14-րդ պարտադիր խնդիրների լուծման ուղղությամբ»: | Չի ընդունվել:<br><br>Ինչպես արդեն նշել ենք, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի համաձայն՝ ՀՀ-ում բոլոր մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից արդեն իսկ կատարվում են մասհանումներ, որոնք հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում **բացառապես բնապահպանական ծրագրերի** իրականացման համար: Հետևաբար ռոյալթիներց կատարվող մասհանումները նպատակ ունեն նպաստելու համայնքների կայուն և շարունակական զարգացմանը՝ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնելու միջոցով: | Չի ընդունվել |
| 5. | | Նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>«Համայնքներին բաշխված համայնքային մասհանումների մասով շրջակա միջավայրի պահպանության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նախագիծը և Ծրագրի փոփոխությունները մշակվում են համայնքի ղեկավարի կողմից՝ հիմք ընդունելով տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերը՝ առաջնահերթություն տալով ազդակիր բնակավայրի զարգացման ծրագրերին:»: | Չի ընդունվել:<br><br>Համայնքներին բաշխված համայնքային մասհանումների մասով իրականացվող Ծրագրերն ունենալու են սոցիալ-տնտեսական ուղղվածություն: | Չի ընդունվել |
| 6. | | Նախագծի 4-րդ հոդված | Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ .<br><br>«Օրենքի 34-րդ հոդված $2^1$ մասում «սուբվենցիաների» բառից հետո ավելացնել. «սույն օրենքի 20-րդ հոդվածով համայնքներին բաշխված համայնքային մասհանումների» բառերը»: | Չի ընդունվել:<br><br>Իրականացվող ծրագրերի վերահսկողական մեխանիզմը օրենքի նախագծում նախատեսված է առանձին հաշվետվության ներկայացման և հրապարակման վերաբերյալ դրույթների սահմանմամբ: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 7. | | Նախագծի 5-րդ հոդված | Նախագծի 5-րդ հոդվածը հանել: | Չի ընդունվել:<br>Առանձին հաշվետվության ներկայացումն ապահովում է ռոյալթիներից բաշխված մասհանումներով իրականացվող ծրագրի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, ինչպես նաև ունի վերահսկման մեխանիզմ: | Չի ընդունվել |
| 8. | | Նախագծի 6-րդ հոդված | Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասը հանել: | Չի ընդունվել:<br>Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասով ապահովվում է իրականացվող ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունների եւ դրանց առաջնահերթությունների սահմանումը, Ծրագիրը կամ Ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգի և Հաշվետվության ձևաչափի սահմանումը: Վերջիններիս սահմանումը կարևոր է և կապահովի, որպեսզի իրականացվող ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները լինեն հստակ, առաջնային և ունենան վերահսկման մեխանիզմ: | Չի ընդունվել |
| **2. «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** | | | | | |
| 1. | ***Աժ պատգամավոր Արթուր Խաչատրյան*** | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝<br><br>1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետից հանել «կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը» բառերը»: | Չի ընդունվել:<br><br>Տվյալ առաջարկությունը դուրս է օրենքի նախագծում կատարվող փոփոխությունների բովանդակային համատեքստից: | Չի ընդունվել |
| 2. | | Նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր | Չի ընդունվել: | Չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | խմբագրությամբ՝<br><br>2.«Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի սկզբում ավելացնել «համայնքի կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը» բառերը»: | Տվյալ առաջարկությունը դուրս է օրենքի նախագծում կատարվող փոփոխությունների բովանդակային համատեքստից: | |
| 3. | | Նախագծի 3-րդ հոդված: | Նախագծից հանել 3-րդ հոդվածը: | Չի ընդունվել:<br><br>Լիազոր մարմնի հետ համաձայնեցումն ունի վերահսկման մեխանիզմ և նպատակաուղղված է, որ տրամադրված մասհանումներն օգտագործվեն հենց սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման նպատակով և առաջնահերթությունը տրվի ազդակիր բնակավայրերին: | Չի ընդունվել |
| 4. | | Նախագծի 5-րդ հոդված: | Նախագծի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>«Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «նախագիծը» բառից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի 20-րդ հոդվածով համայնքներին բաշխված համայնքային մասհանումների միջոցներով ֆինանսավորվող ծրագրերը»: | Չի ընդունվել:<br><br>Օրենքի նախագծով նախատեսվում է փոփոխություն կատարել Օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետում, քանի որ՝ ռոյալթիից կատարվող մասհանումը Համայնքի բյուջե մուտքագրվող հարկային եկամուտ է: | Չի ընդունվել |